«ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՏՆՕՐԵՆ

ք. Երևան «15» «05» 2025 թ.

ՀՐԱՄԱՆ N 1 - ԳՀ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՐԱՑՎՈՂ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 17-րդ հոդվածի ժ) ենթակետի, «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կանոնադրության 28-րդ կետի 7-րդ ենթակետով, հիմք ընդունելով Էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի մայիսի 13-ի N 1299-Լ հրամանի N 2 հավելվածի 5-րդ կետի 10-րդ ենթակետը, «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի աշխատակիցների հերթական ընդհանուր ժողովի 2025 թվականի մայիսի 14-ի N 01 արձանագրությունը՝ **հրամայում եմ.**

1. Հաստատել եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող և Հայաստանի Հանրապետության տարածքում իրացվող համապատասխանության գնահատման ենթակա պարենային արտադրանքի համապատասխանության հայտարարագրի գրանցման համարի կառուցվածքը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի մայիսի 13-ի N 1299-Լ հրամանի հրապարակման պահից:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳԱՅԱՆԵ ՇԱԽԿՅԱՆ

Հավելված
«Հավատարմագրման ազգային
մարմին» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ
«15» «05» 2025թ.
N 1 - ԳՀ հրամանի

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՐԱՑՎՈՂ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Համապատասխանության հայտարարագրի գրանցման համարի կառուցվածքը.

ARM N X X X / X. X – X X X X – X X X X

(1) (2) (3) (4) (5)

(1) – «ARM N» - Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի ապրիլի 3-ի N 374-Ն որոշման համաձայն՝ պարենային արտադրանքի համապատասխանության հայտարարագրի գրանցման համարի կոդ

(2) – Եզակի (չկրկնվող) հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմնի (ՀԳՄ) գրանցահամարը, որտեղ՝

X X X - ը ՀԳՄ-ի գրանցման հերթական համարը,

X - ը ՀԳՄ-ի հավատարմագրման տեսակը՝ **S -** արտադրանքի սերտիֆիկացման մարմինը:

(3) Փաստաթղթի տեսակի նշագիրը՝ **B** - Արտադրանքի համապատասխանության հայտարարագրեր:

(4) Փաստաթղթի գրանցման հերթական համարը, որը ձևավորվում է գրանցման պահին:

(5) Փաստաթղթի գրանցման տարեթիվը: